Հրաչյա ՄՍՐՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՏԻՊԻ ՁԵՆՔԸ

Անդրկովկասը սկյութական նյութական մշակույթի տարրերի կրող է: Սկյութական ազդեցությունից վերծ չի մնացել նաև խնդրո առարկա տարածաշրջանը:[1] Այս մասին պատմագիտական տվյալներին գալիս է լրացնելու Շիրակից ու Լոռուց հայտնաբերված հնագիտական նյութը՝ հիմնականում հարձակողական սպառազինության նմուշներ՝ ակինակ, նետասլաքներ և կացին:

Ակինակ. Մորգանի կողմից Մուսիերիից հայտնաբերված երկաթե դաշույնը միակն է (աղ. 1, նկ. 1): Այն ունի հորիզոնական ձողաձև վերնամաս, ուղիղ՝ կենտրոնում երկու հորիզոնական ակոսներով բռնակ, ուղղանկյունաձև խաչարդ և եռանկյունաձև շեղբ: Դաշույնը խիստ քայքայված է, չկա ծայրը: Պահպանված մասի երկարությունը 20 սմ է, բռնակինը՝ 8 սմ: Նման կառուցվածք ունեցող դաշույններն ու սրերը, որոնցից հայտնաբերվել են Հայկական լեռնաշխարհի (Կարմիր - բլուր, Թեյշեբայինի, Գեղհովիտ, Ստեփանակերտ և այլ), Կովկասի (Սամքավրո, Սուխումի, Բրիլի, Թղի և այլ), Հարավռուսական տափաստանների (Սին. Վոդի, Ստեպնոյ), Ուկրաինայի (Պոլտավա, Դնեպրոպետրովսկ, Ստարշայա Մոգիլա), Ուրալի (Բիկովո, Ախմիլովո) համաժամանակյա հնագիտական հուշարձաններում և կրում են սկյութական զինագործության առանձնահատկությունները, մասնագիտական գրականության մեջ հայտնի են «ակինակ» անվամբ:

Մուսիերիի գտածոյին շատ նման են Թղիի դամբարանադաշտից հայտնաբերված ակինակները, որոնք ևս ունեն եռանկյունաձև շեղբ և թվագրվում են մ. թ. ա. VII-VI դարերով:[2] Ինչ վերաբերում է Մուսիերիի գտածոյի թվագրմանը, ապա Ս. Եսայանը և Մ. Պոգրեբովան գտնում են, որ այսօրինակ ակինակներն Անդրկովկասում հանդես են գալիս մ. թ. ա. VI դարից ոչ ուշ:[3]

Նետասլաքներ. Մեզ հետաքրքրող տարածաշրջանում բավականին մեծ քանակություն են կազմում սկյութական տիպի պոչակավոր և խողովակակոթաո բրոնզե նետասլաքները: Հայտնաբերվել են Շիրակում՝ Պեմզաշենից, Շիրակավանից, Անի-Պեմզայից, իսկ Լոռիում՝ Ղաչաղանից, Մակարաշենից, Ակներից (Որնակ), Մուսիերիից:

Երկթև խողովակակոթաո նետասլաքներն Անդրկովկասում շատ քիչ են հանդիպում: Ընդհանրապես այս տիպի նետասլաքներն ունեն կամ տերևաձև, կամ շեղանկյունաձև, կամ էլ օվալաձև գլխիկներ: Մեր տարածաշրջանից հայտնաբերվել են Պեմզաշենում՝ 1 և Մուսիերիում՝ 2 (աղ. 1, նկ. 2, 3): Սրանք շեղանկյունաձև գլխիկներով են: Ընդ որում, Պեմզաշենի գտածոները Տ. Խաչատրյանը թվագրում է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններով:[4] Մուսիերիի օրինակի թևերի վրա կան սկյութական նետասլաքներին բնորոշ ակոսներ: Սրանցից մեկը կոթառի վրա բեղիկ ունի: Սկյութների մոտ այս նետասլաքները հիմնականում հանդես են գալիս մ.թ.ա. VII-VI դարերում:[5] Ա. Մելյուկովան նշում է, որ երկթև խողովակակոթաո նետասլաքներն արխաիկ են և Եվրազիայում երևան են եկել դեռևս մինչսկյութական ժամանակաշրջանում:[6]

---

[1] *Я. Манандян, О некоторых проблемах истории древней Армении и Закавказья, Ер., 1944, стр. 45, 54; Ս. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը բոչվորների դեմ, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև ՊԲՀ), 1968, 2, էջ 93–94:*

[2] *Б. Техов, Скифы и центральный Кавказ в VII–VI вв. до н. э., М., 1980, рис. 4, 3, 20.*

[3] *С. Есаян, М. Погребова, Скифские памятники Закавказья, М., 1985, стр. 48.*

[4] *Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975, стр. 20.*

[5] *К. Смирнов, Вооружение савроматов (МИА N 101), М., 1961, стр. 41.*

[6] *А. Мелюкова, Вооружение скифов, САИ, вып. Д 1-4, М., 1964, стр. 18.*

Նմանատիպ նետասլաքներ հայտնաբերվել են Հայկաբերդում, Կարմիր բլուրում, Նորաշենում, Կուլանուրխվինյան դամբարանադաշտում, Մինգեչաուրում, Հարավային Օսեթիայում, Աշուրում, Բաբելոնում և այլ հնավայրերում:[7]

Եռաթև խողովակակոթառ նետասլաքներ ավելի շատ են հայտնաբերվել: Ս. Եսայանը և Մ. Պոգրեբովան Անդրկովկասից հայտնաբերված նմանօրինակ նետասլաքներն ըստ իրենց կառուցվածքային առանձնահատկությունների բաժանել են երեք տիպի:[8] Նույն սկզբունքով կներկայացնենք մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերված գտածոները :

Առաջին տիպը կազմում են օվալաձև գլխիկով, երկար կամ կարճ կոթառով նետասլաքները: Սրանց մեջ կան նաև այնպիսիք, որոնք կոթառի վրա բութակ ունեն: Ի դեպ, այս տիպի նետասլաքները սկյութների մոտ հանդես են գալիս երկթև նետասլաքների հետ միաժամանակ: Մեզ հետաքրքրող տարածաշրջանից նմանատիպ նետասլաքներ հայտնաբերվել են Պեմզաշենից (աղ. 1, նկ. 5-10), Շիրակավանից և Մուսիերիից (աղ. 1, նկ 4): Պեմզաշենից հայտնաբերված թվով վեց նետասլաքների երկարությունը տատանվում է 3–4 սմ միջև: Սրանցից չորսի կոթառները կարճ են (աղ.1,նկ.5-8), իսկ երկուսինը՝ երկար (աղ. 1, նկ. 9,10): Ընդ որում երկար կոթառովներից մեկի կոթառին կա նաև բութակ:

Շիրակավանից հայտնաբերվել է երկու նետասլաք,* որոնցից մեկը խիստ քայքայված է և փշրված: Երկուսն էլ ունեն կարճ կոթառներ: Պահպանված մի նետասլաքի երկարությունը 2,5 սմ է:

Ինչ վերաբերում է սրանց թվագրմանը, ապա Պեմզաշենի գտածոները Տ. Խաչատրյանը թվագրում է ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանով,[9] իսկ Շիրակավանի գտածոները Ֆ. Տեր-Մարտիրոսովը թվագրում է մ. թ. ա. V-IV դարերով: Մուսիերիի նետասլաքը թվագրվում է մ. թ. ա. VII-VI դդ.:[10] Վ. Իլյինսկայան, Բ. Մոզոլևսկայան և Ա. Կերենցիկինը գտնում են, որ սկյութա - սարմատական հուշարձաններում օվալաձև գլխիկով նետասլաքները հանդես են գալիս երկթև նետասլաքների հետ միաժամանակ և գոյատևում են մ. թ. ա. VII-VI դարերի ընթացքում, իսկ Կ. Սմիրնովը նշում է, որ մ. թ. ա. V դ. սկզբներին այս տիպի նետասլաքները դուրս են գալիս կիրառությունից, չնայած հանդիպում են ավելի ուշ ժամանակի հուշարձաններում:[11] Նմանատիպ նետասլաքներ հայտնաբերվել են Հայկաբերդից, Արին-բերդից, Ֆրանկանոցից, Նիգվգիանից, Դվանի, Սամտավրոյի դամբարանադաշտերից, Աշուրից և այլ հնավայրերից:[12]

Երկրորդ տիպը կազմում են բրոնզե այն նետասլաքները, որոնց գլխիկներն ունեն ոչ ցայտուն արտահայտված շեղանկյունաձև կամ եռանկյունաձև գլխիկներ: Ընդ որում դրանք կլորավուն եզրագծերով են: Նմանատիպ նետասլաքներ բավականին մեծ քանակությամբ հայտնաբերվել են Պեմզաշենում՝ 13: Սրանց երկարությունը 4սմ է, մի երեսույթ, որը ինչպես նկատում են Ս. Եսայանը և Մ. Պոգրեբովան, նմանօրինակ նետասլաքների մեջ չափերի առումով եզակի են:[13] Այս նետասլաքներից մեկն ունի բութակ (աղ. 1, նկ. 11): Իսկ մյուսների մեջ կան և երկար կոթառով, և կարճ կոթառով օրինակներ: Նմանատիպ նետասլաքներ հայտնաբերվել են Կարմիր-բլուրից, Արին-բերդից, Ֆրանկանոցից, Ներքին Հորաթաղից, Մինգեչաուրից, Հարավային Օսեթիայից, Ախալցխայից և այլ հնավայրերից: Ա. Մելյուկովան այս տիպի նետասլաք-

---

[7] *Б. Пиотровский, История и культура Урарту, Ер., 1944, табл. 53 ,93; С. Есаян, М. Погребова, Скифские памятники Закавказья, табл. II; М. Трапш ,Труды ,Т. I, Сухуми , 1970, табл. V ,12 ,13; Г. Ионе, Мингечаурская разновидность наконечников стрел „скифского „ типа МКА. вып. III, Баку, 1953, стр. 81, табл. I.*

[8] *С. Есаян, М. Погребова, Скифские памятники Закавказья, стр. 61 – 69.*

* *Պահպանվում են ՇԵԹ-ի ֆոնդերում :*

[9] *Т. Хачатрян, Древняя культура Ширака , Ер., 1975, стр. 20.*

[10] *А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, стр. 10.*

[11] *В. Ильинская, Б. Мозолевский, А. Терножкин, Курганы VI в. до. н. э. у с. Матусов, Скифия и Кавказ, Киев, 1980, стр. 13; К. Смирнов, Вооружение сарматов, (МИА. N 101), М., 1961, стр. 41.*

[12] *Б. Пиотровский, История и культура Урарту , рис. 53 а, в, г, рис. 93 в, с; С. Есаян , М. Погребова , Скифские... , табл. VII ,17,*

[13] *С. Есаян, М. Погребова, Նշվ. աշխ., էջ 65 :*

ները թվագրում է մ. թ. ա. VII-VI դարերով:[14] Բ. Պիոտրովսկին խոսելով Արին-բերդից հայտնաբերված համանման նետասլաքների մասին, նշում է, որ դրանք վերաբերում են մ. թ. ա. VI-V դարերին, և որ դրանք Էրեբունու միջնաբերդը գրավող թշնամու զենքն են եղել: Սակայն այլ է Մ. Իսրայելյանի կարծիքը այս տիպի նետասլաքների վերաբերյալ. դրանք նա թվագրում է մ. թ. ա. VI-IV դդ. և գտնում է, որ նետասլաքները պատկանել են Վանի թագավորության անկումից հետո Էրեբունիում ապրած բնակչությանը:[15]



Երրորդ տիպի նետասլաքներն ունեն ցայտուն արտահայտված անկյուններով շեղանկյունաձև գլխիկներ: Այդպիսիք հայտնաբերվել են Պեմզաշենից (աղ.1, նկ.12) և Մակարաշենից (աղ.1, նկ.13)՝ մեկական օրինակներով: Մակարաշենի գտածոյի թվագրումը համընկնում է այս տիպի նետասլաքների ընդհանուր թվագրմանը՝ մ. թ. ա. VII-VI դարեր:[16] Նմանատիպ նետասլաքները քիչ են: Դրանք հայտնաբերվել են Կախեթիայից, Մինգեչաուրի դամբարանադաշտից, Հարավային Օսեթիայից, Իրանից:[17]

Չորրորդ տիպի նետասլաքներն ունեն եռանկյունաձև գլխիկներ և ուղիղ հորիզոնական կամ դեպի ներքև իջնող սուր թևիկներ: Սրանց կոթառները փոքր են ու կարճ: Սևգ հետաքրքրող տարածաշրջանում նմանօրինակ նետասլաքներ հայտնաբերվել են Ակներից (աղ.1, նկ.14,15): Նետասլաքներից մեկը (նկ.14) դեպի ներքև իջնող սուր

---

[14] *А. Мелюкова, Вооружение скифов, стр. 68.*

[15] *Б. Пиотровский, Ванское царство, М.,1959, стр. 241; Մ. Իսրայելյան, Էրեբունի քաղաք - ամրոցի պատմությունը, Եր., 1971, էջ 132–133:*

[16] *А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 286 – 288.*

[17] *С. Есаян, М. Погребова, նշվ. աշխ., էջ 69:*

թեփկներով է և ունի 2,5 սմ. երկարություն, իսկ մյուսի (նկ.15) թևիկներն ուղիղ հորիզոնական են, երկարությունը 2 սմ. է: Նետասլաքները թվագրվում են մ. թ. ա. V-IV դդ.:[18]

Պոչուկավոր եռաթև նետասլաքներ մեզ հետաքրքրող տարածաշրջանում հայտնաբերվել են միայն Շիրակի մարզի Սարատակ գյուղի քարարկղային դամբարանից:* Թվով երեք այս նետասլաքներն ունեն եռանկյունաձև գլխիկներ և հատվածքում կլոր սրածայր պոչուկներ: Սրանք ունեն 2-2,5 սմ երկարություն: Լ. Եգանյանը դամբարանը նախապես թվագրել է մ. թ. ա. VIII-VI դարերով:[19] Սակայն դամբարանի ուղեկցող նյութը, այդ թվում մյուս յոթ նետասլաքները բնորոշ են մ. թ. ա. XII-XI դարերով թվագրվող համալիրներից հայտնաբերված գտածոներին:

Նմանատիպ, սակայն երկաթե նետասլաքներ Հայաստանում հայտնաբերվել են Թեյշեբայինիից և թվագրվում են վաղ եայկական ժամանակաշրջանով:[20] Արևելյան Ղրիմում՝ Կիրովի հնագույն բնակավայրում հայտնաբերվել են նմանատիպ ոսկրե նետասլաքներ, որոնք թվագրվում են մ. թ. ա. XV-XII դարերով:[21] Ընդ որում նույն հնավայրից հայտնաբերվել են նաև նույն ժամանակով թվագրվող ոսկրից պատրաստված խողովակակոթառ նետասլաքներ:

Ընդհանրապես դժվար է պատասխանել այն հարցին, թե սկյութական տիպի նետասլաքները, որոնք հայտնաբերվել են Անդրկովկասում և Հայաստանում, որտեղ են արտադրվել՝ տեղո՞ւմ, թե՞ բերվել են դրսից: Այս հարցի շուրջ տարբեր են նաև գիտնականների կարծիքները: Այսպես, օրինակ՝ Գ. Իոնեն և Բ. Գրակովը գտնում են, որ Անդրկովկասում ոչ միայն պատրաստվել են սկյութական տիպի նետասլաքները, այլև օգտագործվել է դրանց պատրաստման տեխնոլոգիան:[22] Այլ է Կ. Պիցխելաուրիի կարծիքը: Նա գտնում է, որ սրանք բացարձակ մուտ չեն տեղական զինագործների արտադրանքին, դրանք ներմուծվել են Անդրկովկաս դրսից՝ թշնամու կողմից:[23] Առավել դժվար է պոչուկավոր նետասլաքների հարցը, քանի որ դրանք թվապես քիչ են: Բացի այդ շատ հետաքրքիր է այն, որ վերը նշված մինչսկյութական Կիրովի բնակավայրից հայտնաբերվել են ոսկորից պատրաստված թե՛ պոչուկավոր և թե՛ խողովակակոթառ երկթև և եռաթև նետասլաքներ: Սա մի հանգամանք է, որը հնարավորություն է տալիս ենթադրելու, թե երկթև և եռաթև նետասլաքները պատրաստվել են դեռ շատ վաղուց (սկսած մ. թ. ա. XVI-XIVդդ.) և պարտադիր չէ, որ դրանք պատրաստված լինեն սկյութների կողմից: Հավանաբար այդպիսին են նաև Սարատակի մ.թ.ա. XII-XI դարերով թվագրվող նետասլաքները:

Երկաթյա կացիններ. Մեզ հետաքրքրող տարածաշրջանից Մուսիերիում՝ 3 (աղ.1, նկ.16-18) և Կուրտանում՝ 1 (աղ.1, նկ.19) հայտնաբերվել են թվով չորս երկաթյա կացիններ: Դրանք երկար, նեղ և փոքր-ինչ գոգավոր, քիչ լայնացող աշխատաբերանով, ուղիղ կամ քիչ հաստացված վերջավորություն ունեցող հանքաբրիչով (îàóøîê) զենքեր են: Հանքաբրիչը հարթ է և ունի կարծես կլորավուն մակերես: Փաստորեն սրանք կացին-մուրճեր են: Մուսիերիից հայտնաբերվածների երկարությունը 10-15 սմ է, աշխատաբերանների լայնությունը՝ 2-2,5 սմ: Իսկ մեկի աշխատաբերանը խիստ քայքայված է ու թերի: Վերջինիս մուրճի հատվածը կտրվածքում բազմանկյունու կտրվածքով է, իսկ հաջորդ երկուսինը՝ քառանկյունի:

---

[18] *А. Мартиросян, Армения в эпоху..., стр. 10; Б. Пиотровский. История и культура Урарту, стр. 308-310.*

** Պահվում են ՇԵԹ-ի ֆոնդերում*

[19] *Լ. Եգանյան, Սարատակի դամբարանը, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը հանրապետական գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 4 –5 :*

[20] *А. Мартиросян, Город Тейшебаини, Ер., 1961, стр. 137, рис. 61.*

[21] *Древности Восточного Крыма /предскифский период и скифы/, Академия наук УССР, институт археологии, Киев, 1970, стр. 35, 45.*

[22] *Г. Ионе, Мингечаурская разновидность наконечников ..., стр. 81 - 82; Б. Граков, Скифы, М., 1971.*

[23] *К. Пицхелаури, Восточная Грузия в конце бронзового века, Тб., 1979, стр. 16.*

Կուրտանի օրինակի երկարությունը 20 սմ է, աշխատաբերանի լայնությունը՝ 3,5 սմ: Սա ևս շատ քայքայված է: Հ. Մարտիրոսյանը ողջ դամբարանը թվագրել է մ. թ. ա. VI-V դարերով [24]:

Կացին-մուրճեր հայտնաբերվել են Խրտանոցից, Սամտավրոյից, Դվանի, Թլիի և Բրիլի դամբարանադաշտերից:[25] Փաստորեն զենքի այս տեսակը Անդրկովկասում լայն տարածում է գտել մ. թ. ա. VII-VI դարերում: Տարբեր են կարծիքները այս զինատեսակի հետ կապված: Հ. Մարտիրոսյանը գտնում է, որ սրանց ծեր Անդրկովկաս է բերվել սկյութների կողմից, իսկ Ա. Մելյոկովան և Մ.Պոգրեբովան պնդում են հակառակը, որ սկյութներն են ընդօրինակել Անդրկովկասից [26]:

Ընդհանրացնելով նշենք, որ մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերված սկյութական տիպի նյութն ամբողջությամբ ներկայանում է զենքի տեսակներով, որոնք հայտնաբերվել են դամբարաններից: Ո՛չ Շիրակը, ո՛չ էլ Լոռին չունեն սկյութական որևէ հուշարձան, որ վկայեր այստեղ նրանց երկարատև բնակության փաստի մասին: Վերը ներկայացված սկյութական տիպի զենքի մեջ կան նմուշներ, որոնք պատրաստված են տեղի վարպետների կողմից, բայց դրանք չեն դարձել հայկական զինագործության օրգանական տարր:

ОРУЖИЕ СКИФСКОГО ТИПА, НАЙДЕННОЕ В СЕВЕРО-ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Резюме — *Г. Мсрян*

Набор вещей скифского типа и характер содержавших их погребений, а также само число таких погребений свидетельствуют, что этот компонент составляли преимущественно воины, пришедшие сюда и в значительной степени усвоившие местную культуру, но сохранившие самобытность воинского снаряжения. Нельзя не отметить, что как Ширак, так и Лори не содержат памятников, свидетельствующих о длительном обитании здесь скифов. Среди вещей скифского типа имеются экземпляры, изготовленные местными мастерами. Но половные формы так и не стали органичным элементом армянского оружейного дела.

---

[24] *А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 289 - 291:*
[25] *С. Есаян, М. Погребова, Նշվ. աշխ., էջ 80:*
[26] *А. Мартиросян, Армения в эпоху..., стр. 290; А. Мелюкова, Вооружение скифов, стр. 67.*